



Զահրաստ

Հովուն դէմ

I

Հովուն դէմ

Պզտիկ տղայ մըն է կեցեր արի

Կը նայի

Չի գիտեր

Թէ օր մ'ալ ինք

Ինչ հովերով տարութեր

Պիտի տուայտի

Այս պզտիկ տղան արի

Որ խազի համար կեցեր

Հովուն կը նայի

II

Հովուն դէմ

Պահ մ'ազատած անշարժութեան բիրտ լուծէն

Հեղ մը մէկ կողմ հեզ մը միւս կողմ

Ծառին ոստերը կ'ոստոստեն

Հովուն դէմ

Վաղանցուկ երջանկութեան մը թափով
Տերեւները կը խաղան
Տերեւները կը պարեն

Լայնանիստ բունն իմաստուն
Որուն մորթը կոշտ է կապեր տարիներու հովուն դէմ
Ներողամիտ կը նայի այդ հանդէսին
Որուն տարրերն իր ծեր լանջքէն են ծներ
Ու կը կանգնի հաստատուն
Հովուն դէմ

Կը յիշէ
Թէ տարիներ առաջ երբ ինքն ալ նրբին
Ձողիկ մըն էր հագիւ թիզ մը հասակով
Ինչ կամքով էր մաքառեր
Չինք տապալել սպառնացող
Հովուն դէմ

Կը նայի
Մեծ հայրիկի մը գորովով եւ հպարտ
Ան կը ժպտի հովուն դէմ

Հովը կ'առնէ ու կը տանի այդ ժպիտը հեռուներն
Հոն ուր մարդիկ կը մարտնչին հովուն դէմ
Երբ հանդիպի
Պզտիկ տղու մը արի
Որ խաղի համար կեցեր իրեն կը նայի

Անոր կը պատմէ գաղտնիքը տեսելու
Հովուն դէմ

III

Հովուն դէմ

Այս հովուն դէմ որ իր հետ սէր իր հետ երազ կը բերէ
Սիրահար Չոյզ մ'է նստեր
Յաւերժութեան կը նայի

Կը շարժի հովն ու տենչանքներ կ'արժարծէ
Իրաններուն մէջ բերկրանքով սիրոյ հերքով դողդոջուն

Հովուն դէմ

Այս հովուն դէմ որ իր հետ սէր իր հետ երազ կը բերէ
Սիրահար գոյզ մ'է նստեր
Յաւերժութեան կը նայի

Կը շարժի հովն ու տենչանքներ կ'արժարծէ
Իրաններուն մէջ բերկրանքով սիրոյ հերքով դողդոջուն

Կը ճողոպրի իրար փակած կուրծքերն անցք մը եթէ տան
Ու կը դառնայ կրկին ետ
Կը խարխափէ բորբ այտերուն վրայ հրդեհած
Ու սիրակէզ մրմունջներով հծծիւններով գերարբշիտ
Խօլ յորձանքներ կ'ուրուագծէ այդ գոյգին շուրջ սիրահար
Որ նստեր
Կ'երգէ սիրերգ մը վաղեմի
Հովուն դէմ

Հովը երազ ու սէր կ'առնէ այդ հին երգին վանկերէն
Ու սլացքով խօլարձակ
Կը ճախրէ յուրժ անհուններու ամենագոր ծարաւով
Կը թաւալի կը ծաւալի մեծադողորդ
Լախտերու պէս կ'իյնայ վար
Տապալելու լեղի պատեր ու պատուարներ խստամբեր
Որ կ'անջատեն մարդը մարդէն անողոր
Չայն գլուխ գլխի կը ձգեն

Իր մենութեան հետ դժնէ
Կը ճախրէ հովն երազկոտ
Իր հետ կ'առնէ ու կը քշէ բեղմնափոշին ոսկեծիլ
Ծաղիկներուն գունազեղ
Կը լեցնէ երանութեան ոսկիով
Անշրպետներն որ սիրավառ սիրտերն ի սպառ կը բաժնեն
Յանդգնօրէն
Հովուն դէմ

Ու սիրակէզ մրմունջներու հծծիւններու նուագով
Հովն արբշիռ
Կը սուրայ վեր նորէն վեր
Ստեղնաշարն ի վեր առկայծ ոլորտներու սիրատենչ
Նորէն երկինք ուր մութ ամպեր կը փախչտին ցանուցիր
Հովուն դէմ
Ու կապոյտէն նոր թափ առած կազդուրուած
Օրհներգութեան պէս բարի
Կ'իջնէ վար
Քաղցրամրմունջ տաղի մը պէս խաղաղութեան ու սիրոյ

Ու երբ յոգնած հանդիպի
Պզտիկ տղու մը արի
Որ խաղի համար կեցեր իրեն կը նայի
Անոր կը պատմէ հաճոյքը սիրելու
Հովուն դէմ

IV

Հովուն դէմ
Պեթոն շէնքերը կը կանգնին
Ամենագոր մարդկութեան
Յաղթութեան իբր նշան

Հովուն դէմ

Որ կը փախի խուճապահար փողոցներէն քիւերէն

Որ իր խոյանքը կը փրկէ տանիքներէն վեր միայն

Թումբերն ի վեր բարձրաբերձ

Մարդուն հանճարը կը ցցուի արձանին պէս յաղթապանձ

Հովուն դէմ

Իր որմերով պատուարներով հոյաշէն

Ու մետաղի կուտակներով հաստափեստ

Ագուցուածքովն անոնց խրթին ամրակուտ

Շարժումներովն անոնց անվերջ կշռութաւոր եւ ահեղ

Մարդը կ'երգէ իր յաղթանակն անկաշկանդ

Հովուն դէմ

Հովուն դէմ

Որ կը բախի խելացնոր այդ ձեռակերտ ժայռերուն

Որ կը փշրէ հոն մոլուցքն իր կատաղի

Ու կ'իյնայ

Բայց հակառակ գետնի տիզմին ու փոշիին ամբարիշտ

Կը բարձրանայ կրկին երկինք դէպի կապոյտն անապակ

Հոն երգելու ոսկեղէն փառքն անհուններու լուսաբիբ

Հոն պարզելու ննջարանն իր մաքուր

Մարդուն դէմ

Մարդը խոնջ

Կքած պեթոն ճիւղներու սահմանէն ներս հեւասպառ

Միօրինակ կշռոյթին տակ մետաղներու կուտակին

Գետնի տիղմին ու փոշիին մէջ անարգ

Մարդը խոնջ

Հովուն ճակատն իր կ'երկարէ քրտնաթոր

Կը չորցնէ քրտինքն աղտոտ աղտոտ հոգին կը լուայ

Հովուն դէմ

Հովը շիթ շիթ քրտինք կ'առնէ ու կը տանի հեռուներն
Հոն ուր կանաչը բնութեան կը տարածուի դեռ անեղծ
Երբ հանդիպի
Պգտիկ տղու մը արի
Որ խաղի համար կեցեր իրեն կը նայի
Կը լռէ հովն իր ամեն վեհ լռութեամբ ու տխուր
Ու մտազբաղ
Մտահոգ
Հեռուներուն կը նայի

V

Աղաղակ մը
Կը բարձրանայ հովուն դէմ
Աղաղակ մը Աղաղակներ

Աղաղակ մը
Կը ճեղքէ կուրծքը հովուն
Աղաղակներ կը բարձրանան
Հովուն դէմ

Քաղաքներէն մեծ ու փարթամ ասաններէն գիւղերէն
Աղաղակներ կը բարձրանան երբ ահեղ
Պայթիւններով մեծադողորդ
Ռումբեր կ'իյնան
Ու կը ցանեն հոն հուրն իրենց մահասփիտ
Կը քանդեն սարդն իր երազին հետ ի սպառ
Աղիողորմ աղաղակներ

Կը բարձրանան հովուն դէմ
Հովուն կուրծքին կը խրին
Ու կը վազէ հովն իր կուրծքէն վիրաւոր

Աննպատակ ոստումներով թափալուն
Մերթ կը սուզի սաղարթներէն վիթխարի
Մոռացումի մշտադալար ծառերուն
Մերթ իր մարմինը կը գարնէ սարալանջէ սարալանջ
Բայց տեաքար կը լսէ ան թէ ինչպէս
Հագարաձայն արձագանգով
Աղաղակ մը Աղաղակներ
Կը բարձրանան հովուն դէմ

Կանգ կ'առնէ հովը նկուն
Երբ հանդիպի
Փոքրիկ տղու մը արի
Որ անտերունջ կեցեր է իր ապագային կը նայի
Լուռ կը հակի բիբերէն ներս այդ պարզունակ աչքերուն
Կ'արտասուէ հովը տխուր
Կը հեռանայ երերուն
Կը գտնէ լեռ մը բարձրաբերձ ձիւնապսակ կատարով
Ու կողին
Կը մխրճուի
Կը կասի հոն
Ինքնասպան
Ինքնասպան
Մարդուն դէմ: